

Քննարկված է

Հաստատված է

«Չեղարքունիքի տարածաշրջանային

«Չեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի

տնօրենի «29» «12» 2016 թ.

«07» «11» 2016 թ. նիստում

թիվ 494 որոշմանով



**« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»**

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՂՈՒԹՅՈՒՆ

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ /ՅԻԿԼԱՅԻՆ/ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

ԿԱՐԳԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Առարկայական (ցիկլային) հանձնաժողովը ուսումնական հաստատության մասնագիտական ընդհանրություն ունեցող դասախոսական կազմը միավորող ուսումնամեթոդական ստորաբաժանում է, որը կազմակերպում և իրականացնում է ուսումնամեթոդական գործընթացի ընդհանուր առարկաների, մասնագիտությունների մոդուլների գծով ուսուցման պրոցեսը: Նպաստում է ուսման որակի բարձրացմանը:

II ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ /ՑԻԿԼԱՅԻՆ/ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հանձնաժողովը կարող է ընդգրկել տարբեր մասնագիտությունների կամ մասնագիտական առարկաների դասախոսների:

III ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ /ՑԻԿԼԱՅԻՆ/ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Առարկայական կամ ցիկլային հանձնաժողովը ղեկավարում է կրթական գործունեությունը հարակից մասնագիտությունների գծով՝ լիազոր մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:
2. Ապահովում է տնօրենի, ուսումնամեթոդական խորհրդի, կառավարման խորհրդի որոշումները՝ լիազոր մարմնի կողմից հաստատված կարգերի համաձայն:
3. Քննարկում և առաջարկում է տվյալ մասնագիտության ուսուցման ծրագրերին վերաբերվող փոփոխություններ չափորոշիչում սահմանված ծավալներով և ներկայացնում ուսումնամեթոդական բաժին:
4. Ուսումնամեթոդական խորհրդի հաստատմանն է ներկայացնում փոխադարձ դասալսումների գրաֆիկ և հաստատված գրաֆիկի համաձայն՝ իրականացնում դասալսումներ և քննարկումներ:

5. Քննարկում է ուսանողների առաջադիմության արդյունքները և ներկայացնում ուսումնամեթոդական խորհուրդ (ուսումնական մաս), որի հիման վրա կատարվում են ուսումնական հաստատության մի շարք գործառույթներ (կրթաթոշակի նշանակում, փոխադրումները կուրսից կուրս, քննությունների վերահանձնման կազմակերպում և այլն):
6. Քննարկվում է դասախոսների կողմից կազմված կիսամյակային և պետական քննությունների հարցաշարերը, կազմում է քննական տոմսերը, տեսուերը, ավարտական ամփոփիչ ատեստավորման տեսուերը՝ համապատասխանեցնելով հանրակրթական ավարտական քննությունների տեսուերի չափորոշիչներին, ներկայացնում ուսումնամեթոդական խորհրդի հաստատմանը: Կախված քննություն հանձնող ուսանողների թվից՝ տեսուերի քանակի վերաբերյալ առաջարկ է ներկայացնում ուսումնամեթոդական խորհուրդ:
7. Քննարկում է մոդուլների արդյունքները:
8. Խրախուսման համար առաջարկ է ներկայացնում հանձնաժողովի՝ լավագույն աշխատանք կատարած աշխատակցի (անդամի) վերաբերյալ: